The European Union's "Support to Migration Policy Development and Relevant Capacity Building in Armenia" Programme

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության և համապատասխան կարողությունների հզորացմանը» ծրագիր

Policy Brief
Համառոտագիր

This project is funded by
the European Union
Ծրագիրը ֆինանսավորվել է
Եվրամիության կողմից

BRITISH COUNCIL

ICHD

This project is implemented by
Ծրագիրն իրականացնում են՝

ԲՐԻԹԻՇ ՔԱՈՒՆՍԻԼ

International Center for Human Development
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Migration Agency of the Ministry of Territorial Administration of RA
ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն

Ազա՞տ են, արդյոք, ՀՀ քաղաքացիները տեղաշարժի հարցում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքը

ՀՀ Սահմանադրությունը ՀՀ քաղաքացիների համար հռչակում է ազատ տեղաշարժի իրավունք, այդ թվում՝ ՀՀ-ից ազատորեն ելքի և ՀՀ ազատ մուտք գործելու իրավունք (հոդված 25) :

Ազատ տեղաշարժվելու իրավունքն ամրագրված է նաև «Մարդու համընդհանուր իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրում և «Մարդու իրավունքների և ազատությունների» Եվրոպական կոնվենցիայում:

Նշված փաստաթղթերը հռչակում են նաև որոշակի պայմաններում քաղաքացիների երկրից դուրս գալու իրավունքի իրականացման նկատմամբ պետությունների (ազգային իշխանությունների) կողմից որոշակի սահմանափակումներ կիրառելու իրավազորությունը՝ նկատի ունենալով, որ որոշ դեպքերում քաղաքացիների ազատ տեղաշարժի անհատական իրավունքը կարող է հակասության մեջ մտնել պետության, հասարակության կամ դրա առանձին անդամների կամ խմբերի իրավունքների հետ՝ կապված վերջինների նկատմամբ տեղաշարժվող քաղաքացու՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարման հետ:

Նպաստու՞մ է, արդյոք ՀՀ օրենսդրությունը ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի իրացմանը

Օրենսդրական հարթությունում առկա են մի շարք բացեր, մասնավորապես՝ օրենքի մակարդակով սահմանված չեն՝

- ՀՀ քաղաքացիների ելքի և մուտքի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
- քաղաքացիների ելքի ժամանակավոր սահմանափակումների հիմքերը և ժամկետները,
- սահմանափակումների հիմքերի ճշգրտման և վերահսկման պայմանները,
- հատուկ կատեգորիաների անձանց (անչափահասներ, օրենսդրությամբ սահմանված կարգով անգործունակ ճանաչվածներ) սահմանը հատելու հետ կապված խնդիրների լուծումները,
- օտարերկրյա պետություններում անձնագիրը կորցրած ՀՀ քաղաքացիներին վերադարձի վկայականների տրամադրման հիմքերը, կարգը, որը գործնականում լայնորեն կիրառվում է վերջին տարիներին,
- ՀՀ քաղաքացիների անձնագրերում օտարերկրյա պետություններում վավերականությունն արտացոլող կնիքի դրման հիմքերը և այլն:

Ինչու՞ կամ ու՞մ է պետք ՀՀ քաղաքացու անձնագրի երկակի վավերականությունը

ՀՀ քաղաքացու անձնագիրը տրվում է որոշակի վավերականության ժամկետով՝ 10 տարով, ապա, որպես կանոն, ևս 5 տարի երկարացումով («ՀՀ անձնագրային համակարգի կանոնադրությունը», որը հաստատվել է ՀՀ կառավարության 1998թ. մարտի 24-ի թ. 821 որոշմամբ): Սակայն առ այսօր ՀՀ քաղաքացու անձնագրում որոշակի վճարի դիմաց (յուրաքանչյուր տարվա համար 1000 դրամ) դրվում է հատուկ կնիք (1-5 տարի ժամկետով), որպես օտարերկրյա պետություններում այդ փաստաթղթի վավերականության ապացույց, որով ըստ էության պաշտո-

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

նապես նույն փաստաթղթի համար սահմանվում է երկակի վավերականության ռեժիմ՝ մեկը հանրապետության ներսում, մյուսը օտարերկրյա պետություններում:

Ինչու՞ է դրվում այդ հատուկ կնիքը: Ըստ պաշտոնական մեկնաբանության այդ կնիքի դրման գլխավոր նպատակը քաղաքացիների Հայաստանի հանրապետությունից ելքի հնարավոր սահմանափակումների հիմքերի ստուգումն է: *Լուծվու՞մ է, արդյոք, այդ խնդիրը նման մեխանիզմով*: Մեր կարծիքով՝ **ՈՉ**, որովհետև նախ՝ անձնագիրը անձի նույնականությունը հաստատող փաստաթուղթ է և ոչ թե անձի հնարավոր հակաօրինական գործունեությունը կամ վարքը կանխարգելելու միջոց, երկրորդ՝ անգամ եթե այդ կնիքը դնելուց համապատասխան մարմինները իսկապես ստուգում են անձի երկրից դուրս գալու հնարավոր սահմանափակումների հիմքերը, ապա այդ առումով սա շատ խոցելի մեխանիզմ է, որովհետև ելքի իրավունքի սահմանափակման հիմքեր ցանակացած անձի համար կարող են առաջանալ նաև կնիքը դնելուց անմիջապես հետո: Ուստի ստացվում է, որ անձնագրում ելքի վավերականության կնիքը դրած անձն ամբողջ հինգ տարի այդ առումով դառնում է ստուգման ոչ ենթակա: Երրորդ՝ այդ կնիքն, ըստ էության, ներկայացնում է ելքի վիզայի մի յուրահատուկ տեսակ, ինչը հակասում է անձնագրին՝ միջազգային իրավունքի փաստաթղթերով ներկայացվող պահանջներին, մասնավորապես *Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին Չիկագոյի կոնվենցիայի* 9-րդ հավելված 3-րդ գլխին՝ «Ուղևորների ժամանման, մեկնման և նրանց ուղեբեռների մասին»:

Իսկ եթե այդ կնիքի դնելն իրականում պարզապես՝

- ՀՀ պետական բյուջեն համալրելու նպատակով քաղաքացիներից լրացուցիչ դրամ հավաքելու համար միջո՞ց է լոկ կամ,
- ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի հիմնարար իրավունքը արհեստականորեն սահմանափակելու քաղաքական նպատա՞կ է հետապնդում կամ,
- գուցե դա ինտենսիվ արտաքին միգրացիոն հոսքեր ունեցող երկրում որոշակի մարմինների համար կոռուպցիոն ճանապարհով ստվերային եկամուտներ շորթելու՞ միջոց է…

Համառոտագիրը մշակվել է “Աջակցություն Հայաստանում միգրացիոն քաղաքականության մշակմանն ու համապատասխան կարողությունների ձևավորմանը” ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից: